

24346

С.1930/1858

Հ Ա Հ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ

ՈՒ

ՀԱՐՎԱԾԱՑՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՅՆԱԱՑԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՊԵՏԱՐԱՅ 1930 ԶԵՐԵՎԱՆ

33187
0-45

С.1930/1858

и
62138

Очиг
Диц

Ч. П. З.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՍՈՅՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ

ՈՒ

ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ

ԱՃԱԱԱՑԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՊԵՏԱՐԱՏ 1930 ՅԵՐԵՎԱՆ

331-87

0-45

2 SEP 2013
КОНЧА
АСТРАХАНСКАЯ
ОБЛАСТЬ
МУН. АКСЕМЕЛЬ

24346

60685-67



Лист. № 1385

Գրառ. № 5499(բ). Պատվ. № 813. Տիրաժ 4000
Պետրոսի յերկրորդ տպարան Յերևանում

ՍՈՑՄՐՑԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԳԱՄՅԱԿԸ ԶՈՐՄ ՏԱՐԻՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆՆ Ե

Խորհրդային միության մեջ հսկայական
աշխատանք ե տարգում յերկիրը սոցիալիս-
տական վերակառուցման յենթարկելու հա-
մար; Կառուցվում են բազմաթիվ գործարան-
ներ վորոնք արտադրում են մեքենաներ,
տրակասրներ և գյուղատնտեսական գոր-
ծիքներ, վորն առաջ մենք զնում ելինք
արտասահմանից; Բատրակների, չքափորնե-
րի, միջակների բաժան-բաժան, անհատա-
կան, մանր անտեսությունները միանում,
կազմում են խոշոր կոլեկտիվ անտեսություն-
ներ, ստեղծվում են հացի գործարաններ—
խորհրդային խոշոր անտեսություններ:

Համկոմկուսի 16-րդ համագումարը նշեց,
վոր 5-ամյա պլանը մենք կկատարենք չորս

տարվա ընթացքում, իսկ վորոշ ասպարեզներում ավելի շուտ: Կոլեկտիվացման հընդամյակը արդեն կատարված է յերկու տարում: Յերկը սոցիալիստական վերակառուցման գործի այսպես արագ ու հաջող ընթացքը հսարավոր է յեղել շնորհիվ սոցիալիստական մրցակցության:

«Պետք է յուրաքանչյուր «Կոմունա» ամեն մի գործարան, ամեն մի գյուղ, ամեն մի սպառողական ընկերություն, ամեն մի պարենավորման կոմիտե մրցության դուրս գա մեկը մյուսի հետ» գրում է Լենինը:

Լենինի պատգամի համաձայն, սոցիալիստական մրցության դուրս յեկան խորհրդային միության գործարանների ու ֆաբրիկաների հարյուր հազարավոր ու միլիոնավոր պլոտեարանները:

Սոցիալիստական մրցությունը գյուղում համեմատաբար ավելի ուշ է ծավալվել քան քաղաքում: Մրցությունը գյուղատնտեսու-

թյան մեջ գեռ չի տվել այնպիսի արդյունքներ, ինչ արդյունաբերությունը:

1929 թվի գարնանացանի ու աշնանացանի ընթացքում մեծ աշխատանք կատարվեց բերքատվությունը բարձրացնելու համար: Կառավարության վորոշումը՝ բարձրացնել բերքատվությունը 30—35 տոկոսվ, լայն արձագանք գտավ չքավոր ու միջակ գյուղացության մեջ: Քաղաքի բանվորների մրցակցության հրավերին չքավորամիջակային գյուղացիությունը արձագանքեց սոցալիստական մրցության դուրս գալով: Կոլտնտեսությունները, Խորհնանտեսությունները և գյուղխորհուրդները պայմանագրեր եյին կնքում ավելի լավ մշակելու համար հողը, ընդարձակելու ցանքսերի տարածությունը, կազմակերպելու նոր կոլտնտեսությունները, ընդարձակելու նորը:

Այս պայմանագրերը իրագործելուն գյուղացիությանն ոգնության հասան քաղաքի բանվորները, նրանք կազմեցին բանվորա-

կամ բրիգադաներ։ Բանբրիգադները գյուղում բացատրում եյին մեր լերկրի սոցիալիստական վերակառուցման նշանակությունը ու անհրաժեշտությունը, ոգնում բատրակներին, չքավորներին ու միջակներին, վերանորոգում՝ նրանց գյուղատնտեսական գործիքներն ու ինվենտարը։

Այլ կերպ վերաբերվեցին կուլակները։ Նրանք կրամատեցին իրենց ցանքսը, ագիտացիա եյին տանում միջակների մեջ, վախեցնում տուրքերով և ամեն ջանք թափում, վոր նրանք ել ցանքսը պակսեցնեն, նրանք աշխատում եյին այս ու այն ձեի պասել կուտանսություններին։

Սակայն բատրակները, չքավորներն ու միջակները չլսեցին կուլակներին, նրանք ընդարձակեցին ցանքսերի տարածությունը և բարձրացրին բերքատվությունը, նրանք կազմակերպեցին կուտանսություններ հակառակ դասակարգային թշնամու ակտիվ յելութներին և «աջ» թերահավատների

գուշակությունների՝ թե իբր գյուղատնտեսությունը գեղի անկումը կդնա։

Գյուղատնտեսության կոլլեկտիվացումը 30 թվի սկզբին այնպիսի չափեր ընդունեց վոր տաս անգամ գերազանցեց կոլլեկտիվների աճման ամենահամարձակ ծրագիրները։

Կուսակցության կենտրոնական կոմիտեն 1930 թվի հունվար ամսին գյուղատնտեսության կոլլեկտիվացման հարցը քննության առնելով նախատեսեց առաջիկա յերկու տարում ամբողջական կոլլեկտիվացման յենթարկել Խորհրդային Միության հիմնական հատկային շրջանները։ Միջին վոլգայի ու Հյուսիսիային կովկասի մարզերում կոլլեկտիվացումը պիտի ավարտվի 1930 թվի ամրանը կամ վոչ ուշ, քան 1931 թվի գարնանը. իսկ մեացած հատկային շրջաններում կոլլեկտիվացումը պիտի ավարտվի 1931 թվի ամրանը, կամ 1932 թվի գարնանը։

Գյուղատնտեսության մասսայական կողմէկտիվացումը հանդիպում ե կուլակների կատաղի դիմագրությանը, վորոնց վերաբերմամբ կուսակցությունը խնդիր ե դրել վերջնականութեան դուրս մղել զյուղից, վերացնել կուլակին՝ վորպես դասակարգ:

Կոլեկտիվացման ընթացքում, մի շաբաթայրելում, հաջողություններից գլխապտույտի յենթարկվելով կատարվեցին սխալներ «ձախ»՝ ըստ ելության տրոցկիստական, աջերին ոժանդակող այդ շեղումը, կենտկոմի մատնանշած տեմպերից առաջ վագելը, գլխավորապես վոչ հատկային մարզերում, ազգային հետամնաց հանրապետություններում վնասեց կոլեկտիվացման գործին, սակայն, կենտկոմի վճռական միջամտության շնորհիվ, սխալը արագորեն շտկվեց, և գարնանացանի կամպանիան անցավ անհամբնթաց հաջողությամբ, գյուղատնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի վճռական առաջնակացմամբ:

Այժմ արդեն Խորհրդային միության գյուղական անտեսությունների մոտավորապես մեկ չորրորդը կոլեկտիվացած է, ցանքսերի տարածության 40 տոկոսը ցանել են կոլխոզները և ապրանքային հացի կեսից ավելին տալու յե սոցիալիստական սեկտորը:

Այդ մեծ գործում աշխատավոր գյուղացիության սոցիալիստական մրցությունն այն ստեղծագործական հզոր ուժն ե յեղել, վորը ողնել ե բատրակներին, չքավորին ու միջակներին՝ տնտեսապես ու քաղաքականապես ամրապնդել նրանց միությունը ընդդեմ կուլակի՝ ժամանակին իրականացնել կուսակցության առաջադրանքը կոլեկտիվացման գործում և կուլակային անտեսությունների լիկվիդացիան համատարած կոլեկտիվացման ըրջաններում:

1930 թվի աշնանացանի ընթացքում, սոցիալիստական մրցությունը պիտի հանդիսանա բատրակ, չքավոր ու միջակ գյու-

Պացիության մոքիլիզացիայի հղոր մի լծակ
մեր գյուղատնտեսությունը արագորեն
զարգացնելու, ցանքսերի ընդարձակել և
բերքատվությունը բարձրացնելու գործում.

1930 թվի ԳԱՐՆԱՍՑԱՆԻ ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

Սոցմրցումն ապահովում է աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ցանքսի տարածության ընդարձակումը բերքատվության բարձր թվերը, նպաստում կուտնատեսության ֆոնդերի աճմանը:

Սոցմրցումը միաժամանակ ուժեղացնում է կոլանդամների հավատը, ավելացնում նրանց յեռանգը, միաձուլում նրանց մի ընտանիքի մեջ, բարձրացնում կոլեկտիվի հեղինակությունն անհատ տնտեսատեր չքափորների ու միջակների աչքին:

Սոցմրցման մի տարվա գործնականը տալիս է կոլանդամների, Խորհրդային տըն-

տեսությունների բանվորության, ինչպես և անհատ գյուղացիների կողմից, իշխանության նախատեսած պլանները իրագործելու վճռական ցանկության, սոցիալիզմի կառուցման համար տարվող գիտակցական պայքարի բազմաթիվ փայլուն որինակներ:

Յերեանի գավառի մեծ Շահրեիսը գյուղի կոլեկտիվը, վորը բաղկացած է 172 տնտեսություննից, չորսհիվ սոցմրցման, կարողացել է գարնանացանի պլանը վերակատարել ցանելով 300 հեկտար բամբակ, 30 հեկտար ըսուտան և այլն: Այդպիսով յուրաքանչյուր անտեսության բամբակի ցանքս գալիս ե մոտ յերկու հեկտար, վոր չտեսնված նվաճում ե:

Հողը վարված է գութանով, մարկոսելու, քաղհանի ու այլ աշխատանքները կատարվում են գործարքով, աշխատավորները բաժանված են բրիգադի, վորոնք աշխատում են մեկը մյուսից արագ և հոգում են լավ կատարել հանձնարարված աշխա-

նուանքը: Շնորհիվ մըցման, 2 ամսվա մեջ
հաջողությամբ ավալտվեց մարկոսումը,
քաղհանը (3 անգամ) և նոսրացումը. չու-
փազանց լավ բերք և սպասվում:

Կոլեկտիվը, գյուղի կոմունովի ու գյուղ-
խորհրդի հետ մեծ ողնություն և ցույց
տվել չքավոր տնտեսություններին, կատա-
րելով նրանց գարնանացանը: Մեծ-Շահ-
բիրի կոլեկտիվը սոցմըցակցության պայ-
մանագիր և կնքել Զաֆարաբադ գյուղի
կոլեկտիվի հետ և աշխատում և անպայ-
ման դուրս գալ:

Ենինականի Զարնչի գյուղի կոլեկտիվը
փոքր և, կազմված միայն 15 տնտեսու-
թյունից, վորոնցից շատերը աշխատավոր
ձեռքերից գուրկ են: Սակայն տնտեսու-
թյան զանազան սեկցիաների միջև կնքված
և մըցակցության պայմանագիր՝ հերկը,
ցանքսը, նրա խնամքը, քաղը ժամանակին
կատարել, բերքատվությունը բարձրացնելու
համար:

Շնորհիվ մըցակցության ու լավ ղեկա-
վարության, արտաղրական պլանը գերա-
կատարվեց (100 հեկտարի փոխարեն 115
հեկտար) կոլեկտիվը ցանել և միայն զբա-
ված ու ախտահանված սերմացու, ողնել
գյուղին ու գտել տվել գյուղացիների հա-
մարյա ամբողջ սերմացուն:

Ժամանակին գարնանացանը ավարտելով
կոլեկտիվը ամբողջ կալոնով վարել և չքա-
վոր անլծկան տնտեսությունների արտերը:

Դարձյալ, հարվածային աշխատանքի շնոր-
հիվ, շնորհիվ և նոր գոմ՝ 50 գլուխ տավարի
համար, նորոգվելու յէ գրասենյակի ու պա-
հեստի շենքերը: Իր այս աշխատանքների
համար կոլեկտիվը շըջմիության կողմից
գրվում և կարմիր տախտակի վրա: Մեկ-
դիաների մեջ առաջին տեղն ե բռնել դաշ-
տավարական սեկցիան:

Համարլուի շըջանի Յուվա գյուղի կոլ-
եկտիվը սոցմըցակցության պայմանագիր
ունի Բեգջղաղլու, Գողաքլու կոլտնտեսու-

թյունների հետ, նա ընդունել է Յերկանի
մեխանիկական գործարանի մրցահրավերը,
մրցակցության մեջ և նաև «Արարատ» գոր-
ծարանի հետ:

Յուվայի կոլեկտիվը տարեսկզբում ընդ-
դրկում եր 130 տնտեսություն, արտադրա-
կան պլանը կազմված եր 130 տնտեսու-
թյան հաշվով: Հետազայում, չնայած 34
տնտեսություն դուրս յեկավ կոլեկտիվից,
բայց 130 տնտեսության հաշվով՝ մշակված
դարձնացանի արտադրական պլանը փոչ
միայն կատարվեց, այլ և գերակատարվեց:
Կոլեկտիվը, 35 հեկտարի փոխարեն, բամ-
բակ և ցանել 38 հեկտար, գարի՝ 5 հեկտար,
ցորեն՝ 40 հ. բստան՝ 2 հ. առվույտ՝ 2 հ.,
խաղողի այգի յե մշակել 45 հեկտար և այլն:
Այդիների մշակությունը կատարված է որի-
նակելի կերպով, իր ժամանակին, առանց
դրսից բանվորական ուժ վերցնելու, վորի
առթիվ արջմբակային միության կողմից
գովասանքի յե արժանացել:

Մրցակցության ընթացքում աչքի ընկ-
նող կոլանդամերն արժանացել են կարմիր
տախտակին: Որինակ՝ բարեխիղճ աշխատան-
քի ու բացակայություն՝ ուշացում չունենա-
լու համար 35 տարեկան չքավոր Բաղիլ
Ավագյանը, բամբակագործական սեկցիայի
վարիչ Արմենակ Սիմոնյանը և դաշտավա-
րական սեկցիայի վարիչ Ալեքսան Խաչա-
տրյանը, վորոնք իրենց սեկցիաների վրա
գրած պարտականությունները կատարել են
ժամանակին ու լավ:

Բեգջղազլու գյուղի կոմսոմոլիսաները
կազմակերպել եյին հարվածայինների բրի-
գադ, վոր այգիների ետելու, վարելու ու
այլ աշխատանքների ընթացքում մրցում եր
հասակավորների բրիգադայի հետ:

Վ. Բասարի շրջանի թայթան գյուղի «Ա-
զիղբեկովի» անվան թուրքական կոլեկտիվը,
վոր բաղկացած է 16 տնտեսությունից, սոց-
մըրցման պայմանագիր է կնքել Դավալույի
կոլեկտիվի հետ, հարվածային կարգով աշ-
խատելու մինչև բերքը հավաքելը:


Դավալուի կոլեկտիվը իր բամբակի ցանք-
սի պլանը դեռ չեր կատարել, յերբ Թայ-
թանի կոլեկտիվը պլանից մի հեկտար եղ-
ավել եր ցանել:

Դարադաղ գյուղի թուրքական կոլեկ-
տիվը մրցման կարգով վերջացնելով գար-
նանացանը՝ ոգնության եր գուրս յեկել հա-
րևան Շոռլու-Դեմքչի գյուղի կոլեկտիվին:

Մոցմրցակցության հաջողության մեջ ա-
ռանձին կարեր դեր են կատարում աշխա-
տանքի ղեկավար ընկերները, կոլտնախա-
գահները, գյուղատնտեսները, տնտեսավար-
ները, սեկցիաների վարիչները, արակառ-
ութասները, կոմիերիտականները, ինչպես և
շուրջային կոլանդամները:

Այսպես շատ հետաքրքիր ե կոլտնտեսու-
թյան որինակելի նախագահ Ամասյա Կիրա-
կոսյանի աշխատանքի գնահատականը, վորը
կազմել ե Համարլուի կու նասեկցիան, սը-
տուգելով Ն. Աղբաշ գյուղի կոլեկտիվի աշ-
խատանքները:

Ն. Աղբաշի կոլտնտեսությունն սոցմըր-
ցակցության պայմանագիր ե կնքել Մեհ-
րաբլուի կոլտնտեսության հետ: Ն. Աղբաշի
կոլտնտեսությունը մրցակցություն կազմա-
կերպելով ու պայմանագրեր կապելով իրմ-
բակների ու խմբավարների միջև, ամբողջու-
թյամբ իրականացրել ե պայմանագրի բո-
լոր կետերը: Ըսկե Ամասյան գյուղի կենտ-
րոնում մի բարձր սյուն ե կանգնեցրել, ամ-
բացը ել նրա վրա մի զանգակ: ամեն որ ա-
ռավոտյան 4 և կեսին ինքը հնչեցնում ե
այդ զանգը, վարից հետո 20 ըոպեյի ըն-
թացքում ամեն մի կոլանդամ իր խմբավա-
րի առաջնորդությամբ զնում ե աշխատան-
քի: Աշխատանքից խուսափելու վոչ մի դեպ-
քեր չի արձանագրված: Կոլտնտեսությունը
կազմակերպել ե հարվածային բրիգադներ,
վորոնք սոցմրցակցության նշանաբանով աշ-
խատել են չափազանց բարեխիզմ: Հարվա-
ծայնությունը խրախուսելու համար ընկ:
Ամասյան գործի մեջ այս մե ու կարմիր



տախտակները մը ցանակ եւ արված 3 հարվածային կոլտնտեսականների:

Ծնորհիվ մը ցման, կոլեկտիվը կատարել եւ արտադրական պլանը, բամբակ ցանված եւ 3 հեկտար ավելի, այդինքուի փորելը կատարված եւ ժամանակին ու վորակով, վագերի առաջին և յերկրորդ սրակումները կատարված են մեծ հաջողությամբ, 2,000 պտղատու ծառերը սրակված են 3 անգամ. կոնտրակտացիայով պահանջված քանակից ավելի պտղուղ եւ հավաքված ու հանձնված. 2 տուփ շերամի համար ստեղծած հարմարությունները միանգամայն նախանձելի ու լավ են. Գյուղգործիքներով ու աշխատող ուժով ողնունություն ե ցույց տված 5 չքավոր տնտեսությունների, կազմակերպված ե 3 շաբաթորյակ՝ հոգուտ կոլտնտեսության ֆոնդերի: Ամբողջ աշխատանքի ընթացքում դրսից բանուժ չի վարձված: Ըսկ Ամայան վոչ միայն անձամբ ժամանակին ստուգել ե կատարված աշխատանքը, ալ և անմիջապես

մասնակցել եւ աշխատանքներին, բամբակի վարի կեալ նա յէ արել արակառուվ:

Ահա, ինչու նա ճանաչված ե կոլտնտեսության որինակելի նախագահ, ինչու կոլտնտեսեկցիան նրան հատուկ շնորհակալության ե արժանացըել:

Փարբու «Ավանդարդ» կոլեկտիվը ե գործուղված Պետհամալսարանի գյուղգակի 3-րդ կուրսի ուսանողուհի Վարսենիկ Շիրոյանը: Գյուղ գաղու որից նա յեռանդով աշխատանքի յէ անցնում: Գարնանացանի ընթացքում նա ամեն մի ջանք թափեց պլանը իրագործելու համար: Նա բանկորների հետ առավոտից աշխատանքի յէ գնում, նրանց հետ չարչարվում, ցույց տալիս թե ինչպես աշխատել, ինչ անել: Նա հաշվի յէ առնում լավ աշխատողներին՝ մըրցանակ տալու համար: «Ավանդարդ» կոլեկտիվում ծնորհիվ ընկ. Վարսենիկի ու մյուս ոշխատող ընկերների ծավալված ե սոցըրցումը և կոլեկտիվը իր աշխատանքով ըինակելի յէ:

Աշտարակի շրջանի Բյուրական գյուղի
ԼԿՅԵՄ բջիջն իրեն հարվածային հայտա-
րարելով կոլեկտիվի աշխատանքներում, ու-
նեցել ե մեծ հաջողություններ: Կոլեկտիվը
հաջողությամբ ավարտել ե գարնանացանն
ու արդիների փորը, կազմակերպվել են մի
յերկու մեծ շաբաթորյակներ առուներն ու
ճանապարհներ մաքրելու համար:

Խորհրդային Յ-րդ տնտեսության մեջ գար-
նանացանի ընթացքում ծավալված սոց.
մրցակցությունն բազմաթիվ հաջողություններ ե ունեցել: Տրակտորային բազային, վո-
րի գեկավարն եր Միհրան Մանուկյանը
խնդիր եր տրված վարել 378 հեկտար: Շնոր-
հիվ հարվածային աշխատանքի՝ Մանուկյանի
բրիգադը վարել ե 830 հեկտար: Տրակտո-
րիստ Մակար Աբրամյանը մեկ ամսում վա-
րել ե 210 հեկտար ու արժանացել մրցա-
նակի: Նման հարվածայիններ ելի կան Յ-րդ
փոր Յ-րդ խորտնտեսությունը իր աշխա-

տանըները ժամանակից շուտ վերջացնելով,
հսարավություն ունեցավ ողնության
դուրս գալու շրջակա վարժագիար, Փա-
բաքար ու մյուս գյուղերի կոլտնտեսու-
թյուններին, չքավոր ու միջակ գյուղացի-
ներին:

Այսպիսով՝ տեսմնում ենք, վոր հենց մի-
այն այս գարնանացանի ընթացքում, սոց-
մըցման շնորհիվ, ընդարձակվել ե ցանք-
սերի տարածությունը—(յեթե Խորհրդային
Հայաստանում անցյալ տարի ցանված եր-
բամբակ 13,000 հեկտար, այս տարի ցան-
ված ե 19,000 հ.), կիրառվել ե ազրումինի-
մումը—(սերմաղտում, ախտահանում, պա-
րարտացում, քաղճան, սրսկում և այլն),
մեքենայացված և հեշտացված ե աշխատան-
քը, ապահովված ե ավելի բարձր բերքը,
բարձրացել ե աշխատանքի արտադրողակա-
նությունը:

Զնայած այս նվաճումներին, սոցմըցումը
դեռ չի ընդգրկել ամբողջ գյուղը, Շատ

թույլ են մասնակցում մրցման անհատական տնտեսությունները, խորհուրդները և կուտընտեսություններից շատերը: Նրանք հաճախ չգիտեն ինչո՞ւ և ինչպես մրցել: Մինչդեռ առաջիկա աշնանացանին անհրաժեշտ է սոցմրցման մեջ ընդգրկել ավելի մեծ մասսա, աշխատավոր գյուղացիության նորանոր շերտեր, ավելի հաջողությամբ իրականացնելու մեզ առաջադրվող պլանները, ավելի արագ վերակերտելու գյուղատնտեսությունը, ամուր բազա ստեղծելու համատարած կոլեկտիվացմանն անցնելու համար առաջիկա տարիներում, լիկիդացիայի յենթարկելու կուլակությանը՝ փորպես դասակարգ, արմատախիլ անելու կապիտալիզմը գյուղի տնտեսության մեջ:

ՈՎ ՅԵՎ ՈՒՄ ՀԵՏ Պ ՏԻ ՄՐՑԻ ԳՅՈՒՂՈՒՄ

Մինչև այժմ մեզ մոտ, սովորաբար սոցմրցակցության պայմանագիր կապվում երմիայն կոլտնտեսությունների միջև և այն

ել մրցակցության դուրս գալիս, աշխատում եյին ընարել հավասար ուժեր: Այս տեսակի մոտեցումը իհարկե ամբողջովին սխալ է: Մեր մրցակցության նպատակը չե ամենեւ վին մրցակցին ինչ գնով ուզում և լինի՝ հաղթել սեացնել խանգարել նրան, կամ ծաղրի առարկա դարձնել: Ամենեին, այդ բոլորը բուրժուական մրցակցություններին յուրահատուկ ե: Սոցիալիստական մրցակցության նպատակն ե ոգնել հետամնացներին, համնելու առաջին շարքերում ընթացողներին, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունն ու դիսցիպլինան ընդհանրապես, վորքան հնարավոր և արագ համնել ընդհանուր նպատակին՝ պլանի իրագործմանը, պայմանագրերի իկանար ածմանը: Միաժամանակ, սոցմրցման ժամանակ հաղթանակող կողմը չի նստում, հանգըստանում ու ծիծալում հետ մնացող կողմի վրա, այլ ընդհակառակը՝ իր ուժերի ներածի չափով ոգնություն և հասցնում յետ

մնացողին-ճեկվածքները արագ վերականշանելու համար:

Ահա, այս իսկ պատճառով յեթե թույլ կողմը մրցակցության դուրս գա ուժեղի հետ, դըրանից վոչ թե վնաս, այլ ոգուտ կստացվի: Այնպես վոր, իրար հետ մրցակցության պիտի դուրս գան վոչ միայն հավասար ուժ ունեցող կոլեկտիվ տնտեսությունները, այլ փոքր կոլեկտիվ՝ մեծի հետ, կոլտնտեսությունը՝ խորհանտեսության հետ, խորհարնտեսությունը՝ մոտիկ զյուղնամայնքի հետ, անհատ տնտեսատերերի հետ, քաղաքային ձեռնարկների, գործարանների հետ:

Սալսկի շրջանում զտնվող «Գիգանտ» խորհանտեսությունն աշխարհի ամենամեծ մեքենայացված հացահատկային տնտեսությունն եւ: Ամեն մի չքափոր կամ միջակ զյուղացի, վոր տեսնում եւ «Գիգանտը», վորոշում եւ ձեռք քաշել իր անհատական տընտեսությունից և մտնել խոշոր կոլեկտիվ տնտեսության մեջ: 1930 թվի սկզբին «Գի-

գանտ»-ի բանվորները մրցակցության հրավիրեցին Հյուսիսային Կովկասի բոլոր գյուղերին ու ստանիցաներին: «Գիգանտ»-ի բոլոր բանվորները, տրակտորիստները, կոմբայնիստները, ծառայողները և գյուղատընտեսները պարտավորվում են 1930 թվի լնդացքում 1) ցանել 74.000 հեկտար գարնանացան 8 որում, 2) 109.000 հեկտար արտերը հնձել հավաքել 16 որվա մեջ: 3) շրջանի բերքատվությունից 30 տոկոս բարձր բերքատվություն ապահովել 4) մի փութ հացահատիկի ինքնարժեքը իջնենել 60 կոպեկի 5) Հարեան կոլտնտեսությունների համար մշակել 20.000 հեկտար հող և այլն:

«Գիգանտ»-ի հրավերն ընդունող ամեն մի գյուղ, կոլեկտիվ կամ շրջան իր հերթին պարտավորվում եր ընդարձակել ցանքսերի տարածությունը, աշխատանք տանել համատարած կոլեկտիվացումը իրականացնելու համար. փող հավաքել տրակտոր առնելու

համար, որինակելի աշխատանքի կազմակերպվածություն մացնել և այլն:

Հատկապես քաղաքը գյուղին կապելու տեսակետից առանձին մեծ նշանակություն ունի գործարանների, ֆաբրիկաների մրցումը կոլտնտեսությունների, խորհանտեսությունների, գյուղհամայնքների հետ, վորպիսի պարագայում գյուղը շատ բան կարող է սովորել քաղաքից: Ինչպես վերևում ասացինք, Յուվայի կոլտնտեսությունը սոցմրցակցության պայմանագիր և կնքել Յերևանի «Արարատ» ու Մելանիկական գործարանների հետ, սակայն այդպիսի որինակներ քիչ ունենք: Անհրաժեշտ և առաջիկա աշխանը ավելի լավ հիմքերի վրա դնել մրցության այն ձևերը, վորոնք նպաստում են պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության կապի ամրացմանը:

Բացի կոլտնտեսությունների ու խորհանտեսությունների մեջ յեղած մրցակցությունից (այն ել վոչ բոլորը) գյուղում

սոցմրցակցությունը շատ թույլ ե, մեղ մոտ չայտնատանում սոցմրցակցությունը գյուղխորհուրդների, գյուղհամայնքների, անհատ տնտեսատեր, չքավոր ու միջակ գյուղացիների միջև համարյա չկա: Մինչդեռ, Խորհրդային Միության շատ անկյուններում մենք այդ ուղղությամբ հիանալի փորձ ունենք: Վերցնենք Դուբրովկա և Պովեռդսկի գյուղաբորդնուրդների մրցության որինակը: Պովեռդսկի գյուղխորհուրդը հրավիրեց գյուղատնտեսական սեկցիայի անդամների արտադրական խորհրդակցություն: Արտադրական խորհրդակցությունը քննեց մրցակցության խնդիրը և մշակեց, ագրոմինիմումի համաձայն, այն պարտավորությունները վոր գյուղամայնը ապագայում ընդունեց: Այդ պարտավորությունները քիչ եյին, ընդամենը չորսը, բայց խիստ կարեոր: Առաջին՝ ամբողջ սերմացուի գտումն ու տեսակավորումն եր, վորը կատարվեց կոմսոմոլի բջջի ջանքերով: յերկրորդ՝ մարգագետինների բա-

բելավումն եր մարգագետինները տարեցտարի թփակալել փչացել ելին, մինչդեռ անսանապահությունը զարգացնելու համար կեր եր անհրաժեշտ, վորոշեց մարգագետինները մաքրել անպետք բույսերից: Յերբորդ պարտավորությունն եր վոչնչացնել բոլոր սահմաններն ու միջնակները: Միջնակները մոլախոտերի բունն են: Ամբողջ գյուղը ըստ պայմանագրի վարեց միջնակները, վորի հետևանքով բերքը 10—17 տոկոսով բարձրացավ: Զորբորդ արմատապտուղների մշակման զարկ տալին եր, վորը նույն գնու կատարվեց: Դուբրովկան պայմանագիրն ընդունեց, կատարեց, մի բան ել ավել (արմատապտուղները մայրեց ցանքսաշրջանառության մեջ): Դժվար ե այժմ պարզել. թե այդ յերկու գյուղերից, վորն է հաղթանակել, բայց այժմ նրանցից յուրաքանչյուրը գիտե, վոր սոցմբցման շնորհիվ մեծ քայլ ե արել դեպի առաջ:

Այսաեղից պարզ յերկում ե, վոր գյուղ-

խորհուրդների, գյուղհամայնքների միջև մրցակցությունը վոչ միայն հնարավոր ե, այլ և շատ ոգտակար:

Հատկապես Հայաստանում, ուր կոլեկտիվացման տոկոսը շատ ավելի քիչ ե, քան ընդհանրապես Խորհրդալին Միության այլ վայրերում, սոցմրցակցության մեջ պիտի ներգրավել անհատական չքավոր միջակ գյուղացիներին, վորոնք դեռ ևս ճնշող մեծամասնությունն են կազմում գյուղում: Սոցմրցակցության մեջ ընդգրկելով անհատանտեսատերին, մենք վճռական հարված տված կլինենք այն քյալագյողներին, վորոնք արհամարում են անհատ անտեսատերերին, աղավաղելով կուսակցության գիծը գյուղում:

Գյուղխորհուրդների, անհատ անտեսատերերի, կոլտնտեսությունների ու խորհարնտեսությունների միջև սոցմրցակցության կազմակերպումը, հատկապես գյուղհամայնքներն ու անհատ չքավորամիջակային արն-

տեսությունները, մրցակցության մեջ պրավելը, առանձին կարևորություն ե ստանում այժմ, աշնանացանի նախորյակին: Խորհրդային Հայաստանին խնդիր ե տրված 114 հազար հեկտար աշնանացան կատարել, այսինքն անցյալ տարվանից 9,4 տոկոս ավելի: Այս քանակից հանքային պարաբռանյութերով պիտի պարաբռացվի 8 հազար հեկտար, վաղ ցել պիտի արգի 40.000 հեկտար, աշնան ցել՝ 40.000 հեկտար, ամբողջ սերմացուն պիտի գտվի, վորից պիտի ախտահանվի 52.000 ցենտներ, աշնանացանը այնպես պիտի կատարվի, վոր 1931 թվի գարնանացանին տեխնիկական մշակույթների ցանքը չպակասի, այլ ընդունակվի:

Կարելի յե արդյոք այս պլանն իրագործել՝ առանց աշխատավորության լայն խավերի ոժանդակության: Վճէ, հնարավոր չե: Իսկ ի՞նչպես պիտի մասնակցի աշխատավոր գյուղացիությունը պլանի իրագործման: Ահա ի՞նչպես:

Շրջանային որգանները, համաձայն ընդհանուր պլանի, ստանում են իրենց ցըջանի կոնկրետ պլանը: Շրջանային որգաններն ել իրենց հերթին, մանրամասն քննության առնելով ստացած խնդիրը և հաշվի առնելով ցըջանի ու յուրաքանչյուր գյուղի առանձնահատկությունները, վորոշում են յուրաքանչյուր գյուղի անելիքը աշնանացանի ընթացքում, մատնանշելով կոլտնտեսությունների խնդիրը մասնավորապես:

Գյուղականություն ել, գյուղաբուժական խորհրդակցության մեջ քննության առնելով գյուղի արտադրական պլանը աշնանացանի ընթացքում՝ մոտավոր ձշտությամբ վորոշում ե թե վճր տնտեսությունը ի՞նչ պիտի անի, ի՞նչ պիտի ցանի, վճր ցանքը ի՞նչքան պիտի ընդարձակի, ի՞նչ նորմուծումներ պիտի մաքնի, ի՞նչքան և ի՞նչ պիտի հանձնի կոնտրակտացիայով, յերբ և այն:

Յուրաքանչյուր գյուղացի, յուրաքանչյուր կոլտնտեսությունը պիտի լավ իմանա թե ի՞նչ ե պա-

հանջվում աշնանացանի պլանով իրենից ու
իր գյուղից: Բացի զբանից անհրաժեշտ է,
վոր կաղմակերպվի սոցմբցակցություն գյուղ
համայնքների, կոլտնտեսությունների, ան-
հատական տնտեսությունների հետ և նրանց
միջև, խորհտնտեսությունների քաղաքի գոր-
ծարանների մքցակցությամբ, վորպեսզի աշ-
նանացանի պլանը կարելի լինի գերակա-
տարել:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՍՈՑՄՐՅԱԿՑՈՒԹՈՒՆԸ

Ի՞նչ կարգով պետք է սոցմբցակցության
պայմանագրեր կապիլ. — Ո՞վ պետք է առա-
ջնը հարց բարձրացնի ու մքցակցության
հրավիրի: Այսաեղ միաձևության վոչ մի
անհրաժեշտություն չկա: Այդ բոլորը կախ-
ված են նրանից թե ինչքան են նշանակու-
թյուն տալիս սոցմբցակցությանը չքավոր
ու միջակ գյուղացիք, կոլտնտեսություններին ու
բարերակները, թե ինչքան վճռականորեն
նրանք այդ գործին կձեռնարկեն: Հայաս-

տանում անդյալ տարի սոցմբցակցությունը
դյուզում առանձին արգյունքներ չափեց,
վորովհետեւ սոցմբցակցության պայմանա-
գրերը կապված եյին առանց կոլտնտես-
ությունը համաձայնության, գըլ-
խավորապես կոլտնտվարչությունների կամ
շրջմիությունների կողմից:

Այդ ձևով պայման կնքելը վոչ մի արժեք
չունի: Մրցակցությունը միայն այն ժա-
մանակ արդյունք կտա, յերբ յուրաքանչյուր
կոլտնտեսություն կամ գյուղամայնիք անդամ
ակտի մասնակցություն կունենա պայ-
մանագրի հնանությանը յեվ այնտեղ արձա-
նագրված պարտավորությունները հանձն
կառնի կատար ածել, յերեւ այդ պայմա-
նագիրը վերեվից չեն փարաթել նրա վզին
այլ ինքնի և մօսկել այն:

Սակայն, իհարկե, չի կարելի միանգամից
գյուղամայնը կամ կոլլեկտիվը հավաքել
ու պայմանագիր մշակել, վորովհետեւ լոյն
ժողովներում պայմանագիր կազմել ու վե-

բամշակելը շատ գժվար ե ու յերկար կտեի:
Անհրաժեշտ ե վորևե մեկին հանձնարարեր
վոր նախորոք պայմանագիր մշակի: Խորհ-
անտեսություններում ու կոլտնտեսություն-
ներում այդ գործով պիտի զբաղվի առա-
դրական խորհրդակցությունը, իսկ գյուղ-
խորհուրդներում՝ գյուղարտաղբական խոր-
հրդակցությունը յեթե կա, իսկ վորտեղ չկա
խորհրդի գյուղատնտեսական սեկցիան: Պայ-
մանագրի կազմելուց հետո պայմանագիրը
պիտի լայն քննության առնվի: Յեթե գյու-
ղում կամ կոլլեկտիվին կից չքավորական
խմբակ կա, պայմանագիրը նախ այնտեղ
ե քննության առնվում: Մինչև ընդհանուր
ժողովին գնելը պայմանագիրը կամ պետք
ե կախել պատից լրագրի միջոցով ծանո-
թացնել գյուղացիներին կամ կոլտնտաժնե-
րին, վորպեսզի նրանցից յուրաքանչյուրն
իր առաջարկությունները մշակի ու այնպես
քա ժողովի:

Կոլեկտիվի, գյուղհամայնքի կամ խորհ-

անտեսության ընդհանուր ժողովը հնեու-
թյան ե առնում ու փոփոխում ե պայմա-
նագիրը. վորուում թէ ո՞ւմ ե մրցակցու-
թյան հրավիրում յեվ ընտրում ե պատգա-
մագորություն (լիազորներ), պայմանագի-
րը կնելու ու սուրագրելու համար:

Այդ լիազորները ուղարկվում են մրցակ-
ցության հրավիրված գյուղը կամ կոլլեկ-
տիվը, ծանոթանում նրանց զրությանն, նը-
րանց պայմաններն ընդունում ու պայմա-
նագիրը կապում: Պատահել են կոլլեկտիվ-
ներ կամ գյուղեր, վոր շատ աղմուկ են
բարձրացրել՝ գեղեղովի վեր են կացել
գնացել հարևան գյուղը պայմանագիր կտ-
պելու, վորը միանգամայն ավելորդ ե:

Ինչքա՞ն՝ ժամանակով պիտի կնել պայ-
մանագիրը.—Խորհրդային միության առա-
ջավոր հացահատիկային նահանգների փորձը
ցույց ե տվել, վոր գյուղում ամենից ավե-
լի ձեռնատու յե սոցմրցակցության պայմա-
նագիրը կապել սեղոնով՝ գարնանացանի

կամպանիայի ընթացքում կամ լերքահավաքի ընթացքում և կամ աշխանացանի կամպանիայի ընթացքում։ Սեղոնվ մրցման պայմանագիր կապել լավ ե նրանով, վոր վորոշ ժամանակամիջոցում (գարուն, ամառ, աշուն), կատարվելիք ամբողջական մի աշխատանքի (ցանքս, բերքահավաք) բոլոր կարեոր ու հիմնական կետերը հնարավոր կինի մտցնել պայմանագրի մեջ և ապահովել այդ աշխատանքների արագ ու ճիշտ իդուրծումը։ Պայմանագրի ժամկետը լրանալիս, այդ պայմանագիրը նորոգվում է հաջորդ սեղոնի համար։ Այսպիսով սոցմրցումը կրում է, վոչ թե ժամանակավոր, կամպանիոն բնույթ, այլ մշտական։

Ի՞նչպիսի յեվ ի՞նչ հարցերի ըուրչը պիտի մրցել. — Ամենից առաջ շատ դժվար ե ու կարիք չկա թվել անխափիր այն բոլոր հարցերը, վորոնց շուրջը կարելի յե մրցակցություն կազմակերպել։ Ամեն մի կոլտնտեսություն, խորհնտնտեսություն և կամ գյուղ

ունի իր տեղական բնական ու տնտեսական առանձնահատկությունները։ Յեթե վորեե խնդիր կարեոր նշանակություն ունի մի շրջանում, մի ուրիշ շրջանում նա կարող է վոչ մի արժեք չունենալ։ Որինակի համար չայսատանի չորային, անջուր շրջաններում հողը ջրով հարսացնելու համար ձմեռը ձյունը վարելը ոգտակար է, սակայն այդ բանը վոչ մի միտք չունի ու վնասակար է լոռու կամ Դիլիջանի բազմաթիվ գյուղերում, ուր խոնավությունը չափից ավելի յե։ Մի ուրիշ որինակ. այժմ չայսատանի համար կոլեկտիվների խոշորացումը մեծ նշանակություն ունի, մինչդեռ չյունիսային կովկասում, ուր այլևս փոքր կուտնտեսություններ վոչ մի տեղ չեք հանդիպել, այդ հարցը այլևս կարեոր չե։

Այնուհետև այն բոլոր պարտավորությունները, վորոնք մրցակցության պայմանագրերի մեջ են մտնում, իրագործելի պիտի լինեն։ Պայմանագրերի մեջ անիրագործելի

կետեր մտցնելը վոչ մի ոգուտ չի տա ու
մրցակցությունը կվերածի խոստումների
անմիտ խաղի: Որինակ՝ ի՞նչ միտք կունե-
նա, յեթե «Անաստված» կոլեկտիվը վորոշի
այս աշնանը պահրագործարան բաց անել,
յերբ նա վոչ կերով ե տապահովված և վոչ
ել կթան անասուններ ունի, իսկ ինքն ել
դբաղվում ե բամբակի ու խաղողի մշակու-
թյամբ: Անպայման արդ կետը կմնար անի-
րագործելի: Սակայն այն պարտավորու-
թյունները, վորոնք մտցվում են պայմա-
նագրի մեջ պետք ե վորոշ լարվածություն,
յեռանդ, ջանք առաջացնեն: Որինակի հա-
մար կարիք կա արդյոք պայմանագրի մեջ
մտցնել կետ, վոր գարնանացանը սկսվի ա-
պրիի սկզբից և վերջանա մայիսի 20-ին
(որինակի համար), յերբ ամեն տարի այդ
ժամանակ ել կատարվում ե: Իհարկե, այդ
կետն առանց պայմանագրի մեջ մտցնելու,
առանց մրցման ել կատարվում ե ու միան-
գամայն ավելորդ ե: Ուրիշ ինդիր ե յեթե

պայմանագրի այդ կետը փոխվեր և վորոշ-
վեր, վոր գարնանացանը կատարվեր մար-
տի 15-ից մինչև ապրիլի 15-ը: Այս դեպ-
քում պահանջվում է լարվածություն, իս-
կական մրցություն:

Առաջիկա աշնանացանի կամպանիայի
ընթացքում սոցմրցակցության պայմանա-
գրերում կարելի ե մտցնել հետեւյալ խըն-
դիրները:

Ընդարձակել աշնանացանի տարածությու-
նը, ի հաշիվ նոր վոռոզվող, մինչ այժմ չը-
մշակվող հողամասերի, ավելի մեծ հողամաս
պարարտացնել, ավելացնել վաղ ցելի, աշ-
նան ցելի և շարքացանի տարածությունը,
ապահովել կուլտուրական մշակույթների
ցանքսի ընդարձակումը գարնանացանին,
գյուղամատեսական մեքենաներին լրիվ ծան-
րաբեռնվածություն տալ—(սմենաներ սահ-
մանելով, ժամանակին նորոգելով), վառե-
լանյութի խնայողություն կատարել, բեր-
քաստվությունը բարձրացնել, սերմագտումը

100 տոկոսի հասցնել, տեսակավոր սերմի տվելի մեծ տոկոսը ախտահանել, կրծատել աշխատանքի ժամկետը, ուժեղացնել ոլայքարը մոլախոտերի գեմ, վերացնել միջնակները, կազմակերպել պայքարը միասատուների գեմ, բազմադաշտ սիստեմին անցնել, այլ ազրոկուլտուր ձեռնարկումներ կատարել, կոլեկտիվացման յենթարկված տնտեսությունների թիվը ավելացնել, մեծացնել, կոլեկտիվների հանրայնացված կազիսալը, անբանժանելի ֆոնդը, աշնանացանի ընթացքում աշխատանքը ճիշտ կազմակերպել, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել, գրսից բանուժ չվարձել, ներքին կարգ ու կանոն սահմանել կոլեկտիվներում, վորակավորել աշխատավորներին, կուլտուրական ձեռնարկումներ կատարել, արտադրական ոգնություն ապահովել կոլեկտիվների կողմից անհատական սակավազոր տնտեսություններին, ապրանքային ամրող արտադրանքը նախնական կոնտրակ-

տացիայի յենթարկել, զարկ տալ անասնապահությանը, և այլն և այլն:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հենց վոր պայմանագիրը ձևակերպվեց ու ստորագրվեց, սոցմցակցությունը պիտի ծավալել՝ մրցակցության մասնակցող կոլեցիաներին, խորհութեանության կամ գյուղականացնին ներության մեջ առանց ներսում կազմակերպված այդ մրցման, առանց յուրաքանչյուր կոլանգամի, չքավոր, միջակ գյուղացու, բատրակի, գյուղունական բանվորի ու գյուղատնտեսի և այլ մասնագետների մասնակցության՝ պարմանագրերը իրագործել անհնարին ե ու կլինի ձևական, ցուցագրական աչքակապություն:

Գյուղհամայնքի կամ կոլեկտիվի ներսը մրցումը կազմակերպելու համար անհրաժեշտ ե ծավալել մասսայական ագիտացիոն աշխատանք չքավոր ու միջակ անհատ տրն-

տեսատերերի ու կոլանդամների միջև։ Այդ
աշխատանքը կուսկոմյերիտ բջիջների, ար-
տագրական խորհրդակցության, կոլվարչու-
թյան, կուլտկոմիսիայի պարտականությու-
նըն է։ Այդ մարմիններն իրենց մասսայական
աշխատանքով մրցակցության դուրս յեկած
յուրաքանչյուր չքափոր, միջակ գյուղացու և
կոլանդամի պիտի համոզեն, վոր առանց
նրանց ակտիվ մասնակցության, պայմա-
նագիրը իրագործել հնարավոր չի։ Մասսա-
յական այդ աշխատանքի ձևերն են պատի
լրագիրը, ընդհանուր ժողովները, խմբական
և անհատական ագիտացիան, գեղարվեստա-
կան ագիտացիան։

Սոցմրցակցությունը կազմակերպելու մեջ
կուսկոմյերիտ բջիջները, չքափորական
խմբակները, (խորհուտեսություններում
բատկոմները) մեծ դեր ունեն։ Նրանք սոց-
մրցակցության մեջ վոչ միայն կազմակեր-
պիչներ պիտի լինեն, այլև առաջամարտիկ-
ներ, նրանք առաջինը պիտի մրցման հրա-

վիրեն իրար ու մնացած կոլեկտիվներին ու
գուշացիներին։ Նրանք պիտի կազմակեր-
պեն ու ղեկավարեն հարվածային բրիգադ-
ները։

Քյուղհամայնքի ներսում մրցակցությու-
նը պիտի ծավալել չքափոր և միջակ անհատ
անտեսատերերի միջև, ցանքով ընդդարձակե-
լու, ազգութեանարկումներ կատարելու, բեր-
քատվությունը բարձրացնելու, կոնտրակ-
տացիոն պայմանները ժամանակին կատա-
րելու, իրար ողնելու նման խնդիրների
շուրջը։ Կոլեկտիվ ու խորհրդային անտե-
սությունների մեջ մրցումը պիտի կազմա-
կերպել անհատ բանվորների կամ նրանց
խմբերի միջև։ Այդ տնտեսություններում աշ-
խատանքների զանազան կատեգորիաներ կան՝
սեկցիաների ղեկավարներ, բրիգադիրներ,
տրակտորիստներ, տանհապետներ, այլ և այլ
մասնագետներ, շարքային բանվորներ։ Սո-
վորաբար անտեսությունը բաժանված ելի-
նում միքանի սեկցիաների (գաշտավարական,

անասնապահական, այդեզործական և այլն), սեկցիաները իրենց հերթին բրիգադների, տասնյակների, սառնաների և այլն։ Նայած աշխատանքի կաղմակերպման ու տվյալ կուլտափի, կամ խորհնատեսության պայմանագրերի, սոցմրցումը պիտի ծավալել այս խմբերի և անհատ աշխատավորների միջն, կնքել պայմանագրեր, ուր մտցնել ընդհանուր պարմանագրերի կետերից բղխող կետեր։

Գործարաններում լայն ծավալ ե ստացել հարվածայնությունը։ Առաջ են գալիս սոցմրցակցության նոր ձեռք—հասարակական բուքսիր և այլն։ Սակայն վոչ հարվածայնությունը և վոչ մյուս ձեռքը գլուղում անհրաժեշտ ծավալ չեն ստացել Յերբեմն, յերբ հարցնում ես թե ձեզ մոտ սոցմրցակցություն կամ հարվածային բրիգադներ կմն, պատասխանում են, վոր հարվածային բրիգադներ կան, բայց մրցակցություն չկա։ Կարծես թե դրանք իրարից տարբեր բաներ

լինեն մինչդեռ հարվածայնությունը սոցմրցակցության մի առանձին ձևն ե։ Հարվածայինները՝ դրանք՝ սոցմրցակցության մասնակցողներից ամենաաչքի ընկնողներն են, ամենից յեռանդով, հարվածային կարգով աշխատողները, վորոնք նպատակ են գնում սոցմրցակցության պայմանագրերն արագ ու լավ կատարել ու գիրակատարել։

Հարվածային բրիգադներն իրենց աշխատանքը ժամանակին կամ ավելի շուտ վերջացնելով կարող են վերածվել հասարակական բուքսիրի (բուքսիր՝ այն նավն ե, վոր իր յետեկից քաշ և տալիս ուրիշ նավի), այսինքն յետ մնացող բրիգադային ոգնության և հասնում, նրա աշխատանքի մի մասը իր վրա լե վերցնում։ Այն ժամանակ, յերբ հարվածային բրիգադները շատանում են, մեծանում, հարվածային կարող են հայտարարվել առանձին սեկցիաներ, կոլանաեսություններ, խորհանտեսություններ, գյուղացներ։

Խորհանտեսությունների ու կոլտնտեսությունների ներսում ծավալվող մրցակցությունը հատկապես պիտի ձգտի աշխատանքային դիսցիպլինան ու արտադրողականությունը բարձրացնելու, աշխատանքի վորակը լավացնելու, խնայողության, ժամկետը կրճատելու խնդիրների վրա:

Եբբ որինակբերենք արակտորիստների բրիգադի. մրցահրավերը. «Մենք 1-ին բրիգադի տրակտորիստներ՝ սոցմրցակցության ենք կանչում 3-րդ բրիգադի տրակտորիստներին: Մենք պարտավորվում ենք 1. մեր հողամասի վարը վերջացնել արտադրական պլանի՝ ժամկետից 3 որ առաջ, 2. լավ վորակի աշխատանք տալ, 3. տնտեսել վառելիքն ու մերենայի յուղը 10 տոկոս, 4. ուշացումներ, գործալքում չունենալ»:

Քիչ նշանակություն չունի մրցման հետագա ծավալումը, գլխավորելը, ղեկավարելը: Գործնականում այդ ղեկավարությունը հանձնվում է արտադրական հանձնա-

ծողովին: Արտադրական հանձնաժողովն ու խորհրդակցությունը պիտի ձեռնարկեն հարվածայնությունը կազմակերպելուն, անհատական պարմանագրեր կնքելուն, առանձին մրցողներին բրիգադների մեջ միացնելուն: Արտադրական հանձնաժողովները սահմանում են հասարակական հսկողություն մրցման վրա, այնպես, վոր բոլորը հետեւս մրցողների վերջրած պարտավորությունների կատարմանը: Պետք ե մրցության ընթացքի մասին լսել հաւաքեցվություններ: Մրցման լավ ու վատ կողմերը պիտի պարզաբանվեն պատի լրագրում կամ հատուկ տեղեկատու թերթիկների մեջ (Բյուլետեն): Ամենալավ մրցողների, ամենաարդյունավետ աշխատողների անունները պիտի գրել պատի լրագրում, ինչպես և հետ նացողների անունները: Կարելի լեկարմիր ու սեվ տախտակներում պարբերաբար տալ լավ հարվածայինների և լողիների անունները: Նույնը վերաբերվում է

նաև աշխատողների առանձին խմբերին։ Մրցման մեջ աչքի ընկնողներին պիտի խրախուսանիներ տալ, բանավոր, գրավոր, ինչպես և պարզեվատել արժեքավոր իրերով, փողով կամ այլ ձևով։

Պարզեատարությունները կատարում են հատկապես ստուգումներից և արդյունքների հաշվառումից հետո։ Սուրզում կարելի յե կատարել ըստ անհրաժեշտության, այն ժամանակ, յերբ սոցմրցակցությունը թուլանում է կամ շատ բացեր ունի, այդ պակասությունները վերացնելու համար, կամ յերբ միացող կողմերը ուզում են իրար ստուգել։ Արդյունիների հաշվառում կատարում են պայմանագրերի ժամկետը լրանալուց։ Արդյունքների հաշվառման (ինչպես և ստուգումների) ժամանակ նույնպես լայն մասսայական աշխատանք ե ծափալվում։ Նախ հաշվի յեն առնում անհատների, աշխատավորների գրուպպաների (սառնա, բրիդադա, տասնյակ), սեկցիաների ու

ճյուղերի մրցման արդյունքները, ապա ամբողջ կոլանտեսությանը կամ համայնքինը։ Զեկուցումներ են տրվում, հաշվի յեն առնը-վում նվաճումներն ու բացերը, ծանոթացնում են արդյունքների հետ մասսային, պատի լրագրում կամ աեղեկատուի մեջ պարզաբանումներ գրում մրցման արդյունքների մասին և տալիս արդյունքների բնութի մասին զնանաւական։ Ըստրվում ե նոր պատղամավորություն զնալու համար մրցող հակառակորդի մոտ (կոլանտեսության կամ գյուղհամայնքի) հաշվետվություն տալու նըսանց։ Միևնույնը կատարում ե և մրցակիցը, յերկու կողմերը նվաճումները սկսում են համեմատել, թե վոր կողմը պայմանի վոր կետերն ե կատարել և վորը չի կարողացել։ Այդ միևնույն պատղամավորությանը պիտի հանձնարարել նոր պատնագիր կնքելը հիմնվելով ունեցած նվաճումների և բացերի հաշվառման, մրցման հին վորձի վրա։ Իհարկե, այս նոր պայմա-

նազիրն ել պետք ե լայն քննության առնը-
վի ընդհանուր ժողովների կողմից:

Այս գործնուկան աշխատանքը, ղեկավա-
րում ե արտադրական հանձնաժողովը, բայց
կուս. և կոմյերիտ բջիջիները չպիտի մո-
ռանան, վոր հանձնաժողովներ ընտրելով
իրենց պարտականությունը չի վերջանում
վոր սոցմբցակցության նման տնտեսական
ու քաղաքական մեծ նշանակություն ուսե-
ցող աշխատանքի քաղաքական ղեկավարնե-
րը իրենք են հանդիսանում: Նրանք են, վոր
պետք ե առաջ մղեն մրցակցությունը ղե-
կավարողներին, պետք յեղած ղեղում
ստուգութիւնը կատարեն, հետեւ, վոր կեղծ
հարվածայնությունն ու կեղծ մրցությունը
չվարակի հետամնաց, անգիտակից աշխա-
տավորներին, վոր դասակարգային պայքարը
չընուացվի ու կուլակային պրովակացիան
ընկճի մրցողների կամքն ու յեռանդը, վոր
բացերն ու սիալները չհուսահատեցնեն
չքավոր, միջակ գյուղացիներին, կոլանդամ-

ներին ու գյուղատնտեսական բանվորներին
վոր մրցակցությունը խանգարող ու աղա-
վաղող ամեն մի խոչընդուած վերացվի մեջ-
տեղից:

Սոցմբցակցությունը բոլոր կոլանտե-
սություններում, գյուղամայնքներում, խոր-
տնտեսություններում և այն Ճի կարող
միատեսակ, միաձև լինել: Կարիք ել չկա,
վոր այդպես լինի: Յուրաքանչյուր գյուղ
իր առանձնահատկություններն ունի, մըր-
ցումն ել առանձնահատուկ ինդիրներ պի-
տի ընդգրկի և առանձնահատուկ ձևեր ըն-
դունի: Սակայն այն նոր ձևերը, այն նոր
խնդիրները, վոր մրցող աշխատավորությունը
ստեղծագործում և աշխատանքի մեջ, այդ
փորձը պետք ե ընդհանրացվի, ամենից ա-
ռաջ տեղական պատի թերթերում, ապա և
«Խորհրդային Հայոստանում», «Մաճկալում»
«Կոլխոզներում» «Բարեկալում» «Ավանդար-
դում» և այլ տպագիր որդաններում:

Առաջիկա աշնանացանին, ոգտվելով

մինչայժմյա այն փորձից, պիտի աշխատել կազմակերպել սոցմբցակցությունն այնտեղ, ուր նա բացակայել ե, ուժեղացնել մրցումը այնտեղ, ուր նա թույլ ե յեղեւ, փոխել հին ձևերը, ինքնահոս, անկազմակերպ ու անդեկավար սոցմբցումը փոխարինել այն փորձով, վերը ավել ե գրական արդյունքներ, վոչ մի ըստե չմոռանալ, վոր միայն սոցմբցակցությամբ, արտադրողականությունը բարձրացնելով, յուրաքանչյուր աշխատվոր գյուղացու, յուրաքանչյուր կոլեկտիվի առաջ դրված արտադրական պլանները կատարելու դեպքում միայն, կարելի լինի արագութեն սոցիալիստական նիմուններով վերակառուցել գյուղատեսներու բյունը իրազրծել ներամյակը չուստարում. Աօցմբցումը պիտի գտնան մասսայական: Վողջ բարեկուրյունը չբավոր ու միջակ գյուղացիությունը պիտի ներգրավվեն սոցմբցան մեջ. Վորպեսզի 1930 թվի աշխատանքների ընթացանակը անման անվայիսի բափով, Վորին մենք հասանք 1930 թվի բարեանացանին:

Հ Յ. Գ. Ե Լ Ա Յ Ո. *

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ*)

Կոլեկտիվ տնտեսությունը ձիշտ կազմակերպելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, նաև աշանանացնի կամպանիան ժամանակին ավարտելու համար

ՀՐՃԱՆԻ

գյուղի կողմեկտիվ տնտեսության անդամները, հանձինս կոլտնտեսության վարչության նախագահ ընկ. , վոր հետեւով վերակառուցել գյուղատեսներու բյունը իրազրծել ներամյակը չուստարում. Աօցմբցումը պիտի գտնան մասսայական: Վողջ բարեկուրյունը չբավոր ու միջակ գյուղացիությունը պիտի ներգրավվեն սոցմբցան մեջ. Վորպեսզի 1930 թվի աշխատանքների ընթացանակը անման անվայիսի բափով, Վորին մենք հասանք 1930 թվի բարեանացանին:

ատագայում կոչվելու յե « »
մի կողմից և
ՀՐՃԱՆԻ գյուղի

*) Կոլտնտեսությունների միջև կնքվելիք սոցմբցան պայմանագրի այս ձևը փոփոխությունների կարող ե յենթարկվել ըստ տեղական պայմանների:

բ) իրենց տարեկան զուտ ոգուտի վոչ
պակաս, քան տոկ. հատկացնելու յին
դրամագլուխներին, վորից առնվազն
տոկ. անբաժանելի դրամագլխին:

գ) Վարելահողերի վոչ պակաս, քան
տոկ. ցանել:

դ) Վերոհիշյալ ցանքսերն ապահովելու
նպատակով յերկու տնտեսություններն ել
նպատակով յերկու տնտեսությունների « » տոկ. կամ « » տըն-
տեսություն. իսկ կոլտըն-
տեսությունը՝ « » տոկ. կամ « »
տնտեսություն, ընդվորում յերկու կոլտնտե-
սություններն ել պարտավորվում են ներ-
գրավել իրենց գյուղերի բատրակներին.....
տոկոսով, իսկ միջակները պետք ե կազմեն,
կոլտնտեսությունների մեջ մտած անդամ-
ների վոչ պակաս, քան տոկ:

ա) Գանձել փայտագնարները և մուտ-
քի վճարները լրիվ, պահպանելով բատրակ-
ներին և չքափորներին այդ առթիվ տրված
արտոնությունները:

ե) Ամբողջ վարը կատարել գութանով,
զործածությունից հանելով չութը:

զ) Սերմը զտել և ախտահանել 100 տոկ.՝
յի) Մերենաներին տալ լրիվ բեռնավո-
րում:

1. Տրակտոր «Ֆորդոն» 150 հեկտ.
2. Շարքացան 40 »
3. Տրակտոր «Ինտերն.» 200 »

4. Տրիելներին 8000 դ.
 ը) Կոնտարակտացիայի յենթարկել ամբողջ
 ցանքսերը, կիրառելով կոնտարակտացիոն
 պայմանագրի բոլոր կետերը և ամբողջ աշ-
 խատանքային հասույթը հանձնելով մթերող
 որդաններին:

թ) Հաշվապահությունը պահել աժուր
դրության մեջ:

Ժ) Ստացած բոլոր վարկերը ծառայեցնել
իրենց նպատակին, թույլ չտալով ժամկե-
տանց գումարներ:

2. կոլտնտեսությունը
պարտավորվում ե պարարտացնել
հեկտար գոմաղբով, հեկտ. հանքային
պարարտացումով։ Յանքսերի համար նա-
խատեսված հողերի տոկ. աշնանացան
հերկ կատարել գարնանացանի համար, աշ-
նանացանի համար վաղ ցել կատարել. աշ-
նանացանի ծրագրած ցանքսերի տարածու-
թյան տոկ.:

իսկ կողաճռեսությունն
 իր հերթին պարտավորվում ե պարաբա-
 ցնել հեկտ. դոժաղբով, հեկտար հան-
 քային պարաբացումով, գարնանացանի
 հատկացրած հողերի տոկ. աշնան հերկ
 կատարել, աշնանացանի համար վաղ ցե-
 կատարել. աշնանացանի ծրագրած ցանքսե-
 րի. տարածության տոկ.:

ՅԵՐԿՈւ կոլտնտեսությունները (կամ մեկնումնելը դրանցից) պարտավորվում են անցնել բազմադաշտյան ցանքսաւշը ջանառության:

4. կոլտնտեսությունն
իր ցանքսերի տոկ. պարտավորվում է
կատարել շարքացանով, կոլտնտե-
սությունն իր հերթին տոկ., կոլտնտե-
սությունը պարտավորվում է կոլտնտեսու-
թյան մեջ պատրաստել խոտասերմեր՝ առ-
փոյտ ցենտ., վիկա ցենտ., կորնգան
ցենտ.:

5. Կոլտնաեսությունները պարտավորվում են ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ բերքատվությունը *) բարձրացնելու:

ա) Ցորեն	1 հեկտ.	» փ. կամ բարձ.	0/0-ով
բ) Բամբակ	»	» փ. » »	»
գ) Գետն.	»	» փ. » »	»
դ) Գարի	»	» փ. » »	»
ե) Խաղող	»	» փ. » »	»

Յերկու կոլտնատեսությունները պարտավորվում են դաշտային բոլոր աշխատանքները, այն եւ վարը, ցանքսերը, քաղցան, բժշկություն, բերքի հավաքումը և այլ աշխատանքները կատարել արտադրական պլանով նախատեսված ժամկետին:

Ա. Ե Ա Ս Բ Ա Փ Ա Խ Ո Ւ Բ Ի Ա Յ Ա Ս Ա Փ Ա Ր Ի Վ Ո Ւ Մ

ա) Առանձնացնել և վաճառել տնտեսությունների ամբողջ անպետք անասունները,

*) Բերքատվության բարձրացման առկուսը վորշելիս հիմք ե ընդունվելու 1929—30 թ. բերքի միջին չափը:

և նրանց փոխարեն ձեռք բերել ավելի արդյունավետ անասուններ:

բ) Ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ լավ վորակի արտադրող ցուլեր:

գ) Բոլոր ահսակի լավ վորակի մատղաշանասուններ պահել անտեսություններում:

դ) Անասունների խնամքը տանել համաձայն սահմանված զորմինիմումի:

ե) Անասունների կերակրումը կատարել պյուղատեսի կողմից մշակված նորմաներով:

զ) Կովերի կաթնատվությունը բարձրացնել միջինը մեկ կովին « » փութ. կամ կաթնատվության բարձրացումնախորդ տարվա համեմատությամբ « » տոկոսով:

Կուլտ.-Կրթական ասպարհում

ա) Անդամների անդրադիտությունը վերացնել 100⁰/0-ով կամ « » անդրադիտ անդամներ գրագետ դարձնել:

բ) Տնտեսության միջոցներով կազմակերպել մանկական մսուը « » յերեխայի համար և մանկապարտեղ « » յերեխայի համար:

գ)

դ)

ե)

Սույն պայմանագիրը կնքվում և _____ ժամանակով՝ սկսած ամսի
« »-ից մինչև ամսի « »-ը:

Պայմանագրի ստուգումը կատարվում է ընթացքում յերկու անդամ « »-ին և « »-ին:

Սույն պայմանագրի ստուգումը կատարվում է հատուկ հանձնաժողովի միջոցով, փորը բաղկացած պետք է լինի 2 կոլտնտեսությունն լի 2-ական ներկայացուցիչներից, կոլտնտմիության ներկայացուցչի նախագահությամբ:

Պայմանագիրը կազմվում է 3 որինակից. մեկական որինակներ պահպահվում են կոլտընտեսություններում, իսկ յերրորդն ուղարկվում է կոլտնտմիություն:

Սուրագրություններ

Կոլտնտեսության լիազորներ՝ 1.

2.

3.

1.

Կոլտնտեսության իազորներ՝ 2.

3.

Կոլտնտեսության իազորներ՝ 3.





«Ազգային գրադարան»



NL0204089

526.7

804

5

ԳՐԱԲ 10 ԿՈՊ. (2 մամ.)

БИБЛИО
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии
СССР



В. ОГ.

**Соцсоревнование и ударничество за
время осеннего сева**

Госиздат ССР Армен
Эревань—1930

331-87
0-45